1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 45բ հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին::
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 45բ հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.0613 հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածազնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 10-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

թիվ 9044

09 հունիսի

2022թ.

ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Կարմեն Մանուկի Գրիգորյանի լիազորված անձ՝ Արմինե Արմենի Միքայելյանի դիմումը իր վստահորդին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 2542300, տրված 21.05.2008թ. և «Ավագ Ավագյան» ԱԶ /վկայական թիվ 0331/ կողմից 22.03.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002RU7PB9I, 04002VKJMF6I/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Հ.Ավետիսյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած հողամասի 0.0578 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հ.Ավետիսյան փողոց թիվ 31 բնակելի տուն, 0.0021 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հ.Ավետիսյան փողոց թիվ 31/1 հողամաս :
- Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐԶԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 908A

09 հունիսի 2022թ.

ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Տիգրան Մեծի փողոցի թիվ 66ա տան բնակիչ Գագիկ Ալբերտի Լալազարյանի դիմումը.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Չարենցի թաղամասի թիվ 150 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 2427360 տրված 12.09.2009թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 30.05.2022թ. հաստատված թիվ 2893 գրանցամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002FIY8YWD/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Չարենցի 2-րդ թաղամաս թիվ 150 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԳԱՍՊԱՐՅԱՆ



2. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09 հունիսի 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9104

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Սամվել Գրիգորի Հարությունյանի լիազորված անձ Հովհաննես Գրիգորի Կաղեյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 04.07.1994 թ. տրված սեփականության վկայագրի և «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 21.01.2022թ. կատարված չափագրության, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Անդրանիկի թաղամասի թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Սամվել Գրիգորի Հարությունյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.048 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0031 հա սահմանագատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերում կառուցված բնակելի նշանակության շինությունները, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Անդրանիկի թաղամասի թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0031 հա մակերեսով հողամասը համարել Սամվել Գրիգորի Հարությունյանի /ծնված 19.04.1948թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՄԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ

944

09 հունվարի

2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Սամվել Գրիգորի Հարությունյանի լիազորված անձ՝ Հովհաննես Գրիգորի Կաղեյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0074-0043 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայագիր, տրված 04.07.1994թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002RKHPQN6/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Անդրանիկի 4-րդ թաղամաս թիվ 25 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՓԱՄԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09 հունիսի 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9124

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ՄԱՀՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 63
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Աստղիկ Մանուկյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 24.12.2021թ. կատարված չափազորությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 63 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.12734 հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածազնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 10-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09 հունիսի 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9/314

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ՄԱՀՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 107 ՇԵՆՔԻ
ԹԻՎ 30 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 107 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Ալբերտ Շահոյի Ղարիբյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Ռոբերտ Ալբերտի Ղարիբյանին, Ռոմիկ Ալբերտի Ղարիբյանին և Վիկտորյա Ալբերտի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ ՀՀ <<Արմավիրի մարզ>> նոտարական տարածքի նոտար Նառա Հովհաննիսյանի կողմից 13.05.2022թ. հաստատված թիվ 110 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի գործկոմի 10.06.1994թ. թիվ 14 որոշման քաղվածքը, 28.06.1994թ տրված տեխնիկական անձնագիրը, «Աստղիկ Մանուկյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 04.02.2021թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022G9V2XP / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 107 շենքի թիվ 30 բնակարանին կից ինքնակամ կառուցված 66.3քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 107 շենքի թիվ 30 բնակարանին կից ինքնակամ կառուցված 66.3 քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական որի համար սահմանված վճարը կազմում է 54 201 /հիսունչորս հազար երկու հարյուր մեկ / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Պ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 91/4

09 հունիսի 2022թ.

ք. Էջմիածին

**ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՍ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՈՒՈՆ, 1 ԲԱՑՎԱԾՔԸ
ԵՎ 2 ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 24/7 տան, բնակիչ Հրայր Գևորգի Սևոյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Ազատ Գևորգի Սևոյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ 2652535 տրված 06.05.2011թ., «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.04.2022թ. կատարված չափագրությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20220LN70C / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 24/7 հասցեում գտնվող 0.0969հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնական կառուցված 55.4քմ /55.4քմ արտաքին, ներքին 42քմ/ մակերեսով բնակելի տունը, ինքնական բացված թվով 1 դուռը, 1 բացվածքը և 2 պատուհանը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 24/7 հասցեում գտնվող 0.0969հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնական կառուցված 55.4քմ /55.4քմ արտաքին, ներքին 42քմ/ մակերեսով բնակելի տունը, ինքնական բացված թվով 1 դուռը, 1 բացվածքը և 2 պատուհանը ճանաչել օրինական:
2. Ինքնական կառուցված 55.4քմ /55.4քմ արտաքին, ներքին 42քմ/ մակերեսով բնակելի տան, ինքնական բացված թվով 1 դուռն, 1 բացվածքի և 2 պատուհանի օրինականացման համար սահմանված 116 959 / հարյուր տասնվեց հազար ինը հարյուր հիսունինը / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմոծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

թիվ 915X

09 հունիսի

2022թ.

ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Գ.Նարեկացու փողոցի թիվ 24/7 տան բնակիչ Ջրայր Գևորգի Սևոյանի դիմումը իրեն և Ազատ Գևորգի Սևոյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ սեփականության վկայական 2652535 տրված 06.05.2011թ. և «Կարեն Մաչանյան» ԱԶ /վկայական թիվ 0244/ կողմից 20.04.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002H9MJU13, 040022XVHW9Y/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Գ.Նարեկացու փողոցի թիվ 24/7 հասցեում գտնվող անշարժ գույքի գբաղեցրած հողամասի 0.0678 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց թիվ 24/7 բնակելի տուն, 0.0291 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց թիվ 24/8 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 916-Ա

«10» հունիսի 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 7 ԲՆԱԿԻՋՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակիչները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում, Վաղարշապատ համայնքապետարան են դիմել թվով 7 բնակիչներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի թվով 7 բնակիչների հատկացնել 330000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված

ՑՈՒՑԱԿ

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 7 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ «10» ՀՈՒՆԻՍԻ 2022Թ. ԹԻՎ 916-Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ**

N	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Հասցե	Անձնագրի N	Գումար
1.	Ղազարյան Սուսաննա Ալբերտի	Սբ. Մ. Մաշտոց 6բ/19	AU0517126	30000
2.	Ասատրյան Անահիտ Սահակի	Վաղարշապատ, Լեոնիդ Ազգալդյան 6/49	014282354	50000
3.	Հովհաննիսյան Սերվանտես Արշակի	Սբ. Մ. Մաշտոց 16/6	AT0534098	50000
4.	Բոզոյան Սոֆիա Բաբկենի	Արագածի-զ.17/44	AT0576151	50000
5.	Խաչատրյան Նաիրա Ռոբերտի	Արագածի-զ. 5/1	003203122	50000
6.	Մարիկյան Թեհմինե Արթուրի	Արագածի-զ. 4/50	008133118	50000
7.	Արշակյան Սերգեյ Արայի	Մ. Խորենացի 4/4	AP0445512	50000
ԸՆԴԱՄԵՆԸ				330000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

10 հունիսի 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 914X

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30.05.2022թ. ԹԻՎ 796Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 06/06/2022թ. թիվ Կ-06062022-04-0037 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 30.05.2022թ. «Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 796Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

նախաբանում նշված ««Բորիս Արմենի Բաղդասարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող» բառերի փոխարեն կարդալ «Կարեն Գառնիկի Մկրտչյանի և Անի Հովիկի Սարոյանի լիազորված անձ՝ Բորիս Արմենի Բաղդասարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Կարեն Գառնիկի Մկրտչյանին և Անի Հովիկի Սարոյանին սեփականության իրավունքով պատկանող» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

10 հունիսի 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9184

ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոտեղիքային մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի զլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշումը և Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան խճուղի թիվ 7/8 հասցեում գտնվող 0.01056հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9191X

13 հունիսի 2022թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆԲ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՇՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՐԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԱԿ ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԲԱՐ ԱՐԻՖԻ ՄԼԽՈՅԱՆԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Դիլբար Արիֆի Մլխոյանի լիազորված անձ՝ Ազիզ Ղասոյի Հասոյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 08.12.2009թ. հաստատված թիվ 6144 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 24.05.2022թ. կատարված չափագրության, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Թորամանյան փողոցի թիվ 26 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Դիլբար Արիֆի Մլխոյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.1375 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0283հա սահմանագատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերում կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Թորամանյան փողոցի թիվ 26 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0283հա մակերեսով հողամասը համարել Դիլբար Արիֆի Մլխոյանի /ծնված 04.01.1952թ./ սեփականությունը:
2. Մույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 920X

13 հունիսի 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ԶՎԱՐՔՆՈՑ>> ԳԿՏ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ
ՔԱՐԶՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Երևան քաղաքի Ազատության փողոցի թիվ 9ա շենքի թիվ 58 բնակարանի բնակիչ Խաչիկ Սպարտակի Հարությունյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N1269508 տրված 25.10.2004թ./ <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0408-0003/ 0.7հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու փոխադրելու խնդրանքով: Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0408-0003/ 0.7հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու /կորիզավոր/:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ԳԱՄԱՂԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2911X

13 հունիսի 2022թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 75/22 վարչական գործը՝ հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Արսեն Արամայիսի Սարգսյանը /հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Բաղրամյան փող., թիվ 20Բ շենք, 21բն., ն/ք՝ 001763341/, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքի և ծանուցման հիման վրա, 2022 թվականի ապրիլի 27-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Արսեն Արամայիսի Սարգսյանին ծանուցումն ուղարկվել է /հիմք՝ 27.04.2022թ. թիվ 1842/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արսեն Արամայիսի Սարգսյանին ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, վերջինիս կողմից չի ներկայացվել պնդում լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքի Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասը հանդիսանում է Արսեն Արամայիսի Սարգսյանի սեփականությունը և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է նշված հասցեում գտնվող 0,5 հա մակերեսով գյուղ. նշանակության /խաղող/ հողատարածքի համար հողի հարկի գծով 202 391 /երկու հարյուր երկու հազար երեք հարյուր իննսուսմեկ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 126 989 /հարյուր քսանվեց հազար ինը հարյուր ութսունիսիս/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 75 402 /յոթանասուսիսիս/ հազար չորս հարյուր երկու/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 397-րդ, 400-րդ, 401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ և 16-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Արսեն Արամայիսի Սարգսյանից հոգուտ Վաղարշապատ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր 202 391 /երկու հարյուր երկու հազար երեք հարյուր իննսուներեկ/ ՀՀ դրամ՝ որպես Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող 0,5 հա մակերեսով գյուղ. նշանակության /խաղող/ հողատարածքի համար հողի հարկի պարտավորություն, որից 126 989 /հարյուր քսանվեց հազար ինը հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապարքի գումար և 75 402 /յոթանասուներեկ հազար չորս հարյուր երկու/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապարքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ



Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9994

13 հունիսի 2022 թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 74/22 վարչական գործը՝ հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Բաղդասար Գրիշայի Բաղդասարյանը /հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Բսահակյան փ., թիվ 27 տուն, անձնագիր՝ AF0549816 /, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքի և ծանուցման հիման վրա, 2022 թվականի ապրիլի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Բաղդասար Գրիշայի Բաղդասարյանին ծանուցումն ուղարկվել է /հիմք 22.04.2022թ. թիվ 1744/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծմանը անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Բաղդասար Գրիշայի Բաղդասարյանին ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, վերջինիս կողմից չի ներկայացվել պնդում լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքի Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասը հանդիսանում է Բաղդասար Գրիշայի Բաղդասարյանի սեփականությունը և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում գտնվող 1 հա մակերեսով գյուղ. նշանակության /վարելահող ջրովի/ հողատարածքի համար հողի հարկի գծով 198 153 /հարյուր ինսունութ հազար հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 131 354 /հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ 2014-2019թթ. ապառքի գումար և 66 799 /վաթսուվեց հազար յոթ հարյուր ինսունինը/ ՀՀ դրամ 2014-2019թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Էջմիածին քաղաք, Բսահակյան փող., թիվ 27 հասցեում գտնվող 0,076 հա մակերեսով ոչ գյուղ. նշանակության /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0850-0025/ հողատարածքի համար հողի հարկի գծով 91 369 /ինսունմեկ հազար երեք հարյուր վաթսուինը/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 61 711 /վաթսուներեք հազար յոթ հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 29 658 /քսանինը հազար վեց հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

3) Էջմիածին քաղաք, Բսահակյան փող., թիվ 29 հասցեում գտնվող 0,0528 հա մակերեսով ոչ գյուղ. նշանակության /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0850-0024/ հողատարածքի համար հողի հարկի գծով 63 482 /վաթսուներեք հազար չորս հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 42 874 /քառասուներկու հազար ութ հարյուր

յութանասունչորս/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 20 608 /քսան հազար վեց հարյուր ութ/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 397-րդ, 400-րդ, 401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ և 16-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Բաղդասար Գրիշայի Բաղդասարյանից հոգուտ Վաղարշապատ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր 353 004 /երեք հարյուր հիսուներեք հազար չորս/ ՀՀ դրամ՝ որպես Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի հողի հարկի պարտավորություն, որից Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում գտնվող 1 հա մակերեսով գյուղ. նշանակության /վարելահող ջրովի/ հողատարածքի համար հողի հարկի գծով 198 153 /հարյուր իննսունութ հազար հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ, Էջմիածին քաղաք, Իսահակյան փող., թիվ 27 հասցեում գտնվող 0,076 հա մակերեսով ոչ գյուղ. նշանակության /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0850-0025/ հողատարածքի համար հողի հարկի գծով 91 369 /իննսունմեկ հազար երեք հարյուր վաթսուինը/ ՀՀ դրամ և Էջմիածին քաղաք, Իսահակյան փող., թիվ 29 հասցեում գտնվող 0,0528 հա մակերեսով ոչ գյուղ. նշանակության /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0850-0024/ հողատարածքի համար հողի հարկի գծով 63 482 /վաթսուներեք հազար չորս հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելու հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9234

13 հունիսի 2022թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 72/22 վարչական գործը՝ հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Զավեն Խաչիկի Լնդյանը /հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Մանուշյան փող., թիվ 19Ա տուն, անձնագիր՝ _____/, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքի և ծանուցման հիման վրա, 2022 թվականի ապրիլի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Զավեն Խաչիկի Լնդյանին ծանուցումն ուղարկվել է /հիմք 22.04.2022թ. թիվ 1743/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Զավեն Խաչիկի Լնդյանին ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, վերջինիս կողմից չի ներկայացվել պնդում լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքի Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասը հանդիսանում է Զավեն Խաչիկի Լնդյանի սեփականությունը և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է նշված հասցեում գտնվող 0,5 հա մակերեսով գյուղ. նշանակության /խաղող/ հողատարածքի համար հողի հարկի գծով 200 147 /երկու հարյուր հազար հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 135 703 /հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր երեք/ ՀՀ դրամ 2011-2020թթ. ապարքի գումար և 64 444 /վաթսուհինգ հազար չորս հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ 2011-2020թթ. ապարքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 397-րդ, 400-րդ, 401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ և 16-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Զավեն Խաչիկի Լևոյանից հոգուտ Վաղարշապատ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր 200 147 /երկու հարյուր հազար հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ՝ որպես Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող 0,5 հա մակերեսով գյուղ. նշանակության /խաղող/ հողատարածքի համար հողի հարկի պարտավորություն, որից 135 703 /հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր երեք/ ՀՀ դրամ 2011-2020թթ. ապառքի գումար և 64 444 /վաթսուհինգ հազար չորս հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ 2011-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում՝ հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքի պաշտոնական տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

13 հունիսի 2022 թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 92/Կ

ք. Էջմիածին

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

